

Analytical Bulletin
ISSN: 1829-4502
e-ISSN: 2953-8254
Journal homepage: https://analytical-bulletin.cccs.am/index.php/ab/index

CENTER FOR CULTURE AND CIVILIZATION STUDIES FOUNDATION

Heghine Barseghyan
Adaptation Mechanisms of Muslim Brotherhood's Ideology in Europe. Fiqh Alaqalliyyāt

Հեղինե Բարսեղյան
«Մուսուլման Եղբայրների» գաղափարախոսության ադապտացիոն մեխանիզմները Եվրոպայում. Fiqh al-Aqalliyyāt

To cite this article: *Heghine Barseghyan. "*Adaptation Mechanisms of Muslim Brotherhood's Ideology in Europe. Fiqh Alaqalliyyāt." *Analytical Bulletin (CCCS)* 17 (2023): 28-49 DOI: 10.56673/18294502-23.17-27

To link to this article: DOI: 10.56673/18294502-23.17-27

Published online:

23 December

Submit your article to this journal

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ / ANALYTICAL BULLETIN
DOI 10.56673/18294502-23.17-27

«ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ» ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱԴԱՊՏԱՑԻՈՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ. FIQH AL-AQALLIYYĀT

Հեղինե Բարսեղյան[1]

Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն

Համառոտագիր

Եվրոպայում «Մուսուլման եղբայրների» առաջին խմբերը սկսեցին հաստատվել 20-րդ դարի երկրորդ կեսին, ինչը ժամանակագրական առումով համընկնում է մուսուլմանների՝ դեպի Եվրոպա արտագաղթի առաջին մեծ ալիքի հետ: Դրա արդյունքում իսլամի ողջ պատմության ընթացքում առաջին անգամ զգալի թվով մուսուլմաններ ստիպված էին ապրել ոչ իսլամական հասարակություններում: Սա մի շարք հարցադրումներ առաջացրեց, որոնք առնչվում էին ամենատարբեր խնդիրների՝ սկսած Եվրոպայում մուսուլմանների բնակվելու թույլատրելիության հարցից մինչև կենցաղային սովորական խնդիրներ: Հոդվածի նպատակն է ցույց տալ, թե «Մուսուլման եղբայրները» ինչպիսի մեխանիզմներ է կիրառում Եվրոպայում մուսուլմանների կեցությունը հիմնավորելու և վերոնշյալ հարցադրումներին պատասխաններ գտնելու համար, և թե ինչպես է ադապտացվում նրա գաղափարախոսությունը ստեղծված նոր իրադրությունների պայմաններում:

Հոդվածի պատմությունը

Ներկայացվել է՝ 2 նոյեմբերի 2023
Ընդունվել է՝ 15 դեկտեմբերի 2023

Բանալի բառեր՝ *«Մուսուլման եղբայրներ», իսլաման, Եվրոպա, իսլամ, մուսուլմանական փոքրամասնություններ, wasaṭiyya, fiqh al-aqalliyyāt, dār al-daʿwa*

DOI: 10.56673/18294502-23.17-27

Ներածություն

Եվրոպայում «Մուսուլման եղբայրների» առաջին խմբերը սկսեցին հայտնվել 20-րդ դարի երկրորդ կեսին: Դրա հիմնական պատճառը Եգիպտոսում, իսկ հետագայում նաև արաբական այլ

[1] Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, էլ. փոստ heghinbarseghyan@gmail.com

երկրներում «Մուսուլման եղբայրների»[2] անդամների նկատմամբ սկսված հետապնդումներն էին[3]: Սկզբնական շրջանում իխվանները Եվրոպան տեսնում էին որպես ժամանակավոր հանգրվան (նույնիսկ համեմատականներ էին անցկացնում 622 թվականին Մուհամմադ մարգարեի՝ Մեքքայից Մադինա կատարած հարկադրական հիջրայի հետ[4])՝ շարունակելով իրենց գործունեությունը կենտրոնացնել արաբական երկրներում տեղի ունեցող իրադարձությունների վրա: Կարճ ժամանակում, սակայն, նրանց ներկայությունը Եվրոպայում դարձավ ավելի կայուն և հարատև: Իխվանները Եվրոպայում գործողությունների ազատություն ստացան, ինչից զրկված էին իրենց երկրներում և ինչի համար հաճախ բռնաճնշումների էին ենթարկվում: Շարունակելով և՛ խոսքով, և՛ գործով աջակցել «մուսուլմանական աշխարհում» իսլամական պետություններ ստեղծելու գաղափարը՝ իխվաններն իրենց ուշադրությունը սկսեցին կենտրոնացնել

[2] «Մուսուլման եղբայրներ» տերմինը օգտագործվում է կազմակերպության նկատմամբ, իսկ ցանցի մաս կազմող անհատների նկատմամբ կիրառվում է «իխվան» տերմինը:

[3] Եգիպտոսում «Մուսուլման եղբայրների» անդամների դեմ հետապնդումներ սկսվեցին Գամալ Աբդել Նասսերի կողմից (1956-1970), որոնք շարունակվեցին նաև Անվար Սադաթի (1970-1980) և Հոսնի Մուբարաքի (1981-2011) նախագահության շրջանում: Սիրիայում «Մուսուլման եղբայների» դեմ բռնաճնշումների ալիքը սկսվեց 1980-ական թվականներին՝ պայմանավորված 1982 թվականի Հոմսի ապստամբությամբ: 1980-1990-ական թվականներին իխվանների դեմ համանման բռնաճնշումներ իրականացվեցին նաև Լիբիայում և Թունիսում: Իրաքից Եվրոպա արտագաղթի ալիքը հիմնականում տեղի է ունեցել 1990-1991 թվականներին՝ Ծոցի առաջին ճգնաժամից՝ Իրաքի կողմից Քուվեյթ ներխուժումից և օկուպացումից հետո: Իխվանների՝ Եվրոպայում հայտնվելու պատճառների մասին տե՛ս, օրինակ, Frampton M., *The Muslim Brotherhood and the West: A History of Enmity and Engagement* (Harvard University Press, 2018) և Maréchal B., *The Muslim Brothers in Europe: Roots and Discourse* (Leiden/Boston, 2008):

[4] Vidino L., *Aims and Methods of Europe's Muslim Brotherhood*, Current Trends in Islamist Ideology (Hudson Institute, 2006), https://www.hudson.org/national-security-defense/aims-and-methods-of-europe-s-muslim-brotherhood, մուտք՝ 01.11.2023:

արևմուտքում ապրող մուսուլմանների վրա՝ նրանց դիտարկելով որպես իրենց գործունեության համար պարարտ հող և փորձելով նրանց մոտ տարածել իսլամի իրենց մեկնաբանությունը: Դրանով իխվանները նպատակ են հետապնդում մոնոպոլիզացնել «եվրոպական իսլամը» և եվրոպական կառավարությունների մոտ հանդես գալ մուսուլմանական ամբողջ փոքրամասնության անունից:

Եվրոպայի մուսուլման բնակչության հիմնական մասի այստեղ հաստատվելու ժամանակաշրջանը համընկնում է իխվանների առաջին խմբերի ժամանման հետ: Մուսուլմանների արտագաղթը Եվրոպա գլխավորապես պայմանավորված էր մի կողմից իրենց երկրներում տնտեսական ճգնաժամով և գործազրկությամբ, իսկ մյուս կողմից՝ եվրոպական երկրներում էժան աշխատուժի բարձր պահանջարկով: Սրանով պայմանավորված՝ 1950-60-ական թվականներին Եվրոպա արտագաղթածների մեծամասնությունը արական սեռի երիտասարդ ներկայացուցիչներ էին, որոնց մի մասը ամուսնացած էր և ընտանիք ուներ, սակայն գործազրկության պատճառով ստիպված էր եղել արտագաղթել Եվրոպա՝ ընտանիքը թողնելով հայրենի երկրում: Նրանց մեծ մասը չէր տիրապետում եվրոպական լեզուներին և չուներ կրթական բարձր մակարդակ, իսկ ունենալու դեպքում դրա մասին հավաստող դիպլոմները շատ հաճախ վավեր չէին ճանաչվում եվրոպական երկրներում, ուստի արտագաղթյալների մեծամասնությունը գլխավորապես կենտրոնացված էր տնտեսության ցածր ոլորտներում[5]: Այս մարդիկ նույնպես Եվրոպան չէին տեսնում որպես մշտական բնակության վայր: Նրանք սպասում էին իրենց երկրներում քաղաքական ու

[5] 20-րդ դարի երկրորդ կեսին մուսուլմանների՝ Եվրոպա արտագաղթի պատճառների, ընթացքի և հետևանքների շուրջ տե՛ս, օրինակ, Nielsen J., *Muslims in Western Europe* (Edinburgh University Press, 2016. First edition in 1992):

տնտեսական վիճակի կարգավորմանը, որից հետո հնարավոր կլիներ կրկին հետ վերադառնալ և վերամիավորվել իրենց ընտանիքների հետ: Սակայն ժամանակի ընթացքում ակնհայտ դարձավ, որ իրենց երկրներում սոցիալ-տնտեսական պայմանների բարելավումը հազիվ թե կարող է տեղի ունենալ մոտ ապագայում, ինչը ստիպեց շատերին վերանայել Եվրոպայում մշտական բնակություն հաստատելու հեռանկարը և այստեղ բերել նաև իրենց ընտանիքներին: Արդյունքում Եվրոպա աշխատանքի համար եկած մուսուլմանների միայն մի մասը իրականում հետ վերադարձավ իրենց երկրներ[6]:

Մուսուլմանների հաստատվելը Եվրոպայում մի շարք հարցադրումներ և խնդիրներ առաջ բերեց, որոնք անհապաղ պատասխաններ ու լուծումներ էին պահանջում: Եթե սկզբնական շրջանում դրանք այնքան էլ սուր ձևով արտահայտված չէին, քանի որ, ինչպես նշվեց, մուսուլմանների առաջին սերունդը Եվրոպան դիտարկում էր որպես ժամանակավոր հանգրվան, իրավիճակը կտրուկ փոխվեց նրանից հետո, երբ մուսուլմանների մի զգալի մասը որոշեց հետ չվերադառնալ իրենց երկրներ, այլ՝ մշտական բնակություն հաստատել Եվրոպայում: Մինչ դա նրանք հստակորեն բաժանել էին իրենց կյանքի աշխարհիկ ոլորտը, որն առնչվում էր եվրոպական հասարակությունների և իրենց աշխատանքի հետ, կրոնական ոլորտից, որը հիմնականում տան սահմաններից դուրս չէր գալիս: Ընտանիքների վերամիավորումից հետո այս տարանջատումը այլևս անհնար դաձավ: Իսլամը դադարեց ընկալվել որպես մուսուլմանի «անձնական գործ». այն վերածվեց կարևոր գործոնի նրա ընտանեկան և աշխատանքային ամենօրյա

[6] Եթե 1950թ. Եվրոպայում մուսուլմանների ընդհանուր թիվը կազմում էր 10,765,329 մարդ կամ 1.97%, ապա 2020թ.՝ այս թիվը հասել է 42,706,747 մարդու կամ 5.76%: Տե՛ս Kettani H., *Muslim Population in Europe: 1950-2020*, International Journal of Environmental Science and Development, Vol. 1, No. 2 (June 2010):

կյանքում[7]: Առաջ եկան մի շարք կարևոր հարցադրումներ՝ սկսած նրանից, թե արդյոք մուսուլմանների համար ընդհանրապես թույլատրելի է ապրել ոչ իսլամական հասարակություններում թե ոչ, և վերջացրած առավել կենցաղային հարցերով, օրինակ՝ արդյոք մուսուլմանը կարող է գնել ոչ հալալ ձևով մորթված միս, մասնակցել խնջույքի, որտեղ հյուրասիրվում են ալկոհոլ և խոզի միս, վաճառող աշխատել խանութում, որտեղ ալկոհոլ է վաճառվում, շնորհավորել ոչ մուսուլմանին ոչ իսլամական տոների կապացությամբ, ինչպես պետք է ամուսնանալ և ամուսնալուծվել և այլն:

Ակնհայտ դարձավ, որ իրավական տեսանկյունից հսկայական բաց կար, որը պետք է լրացվեր: Իխվաններն առաջինն էին, որ գիտակցեցին այս նոր իրադրությունների պայմաններում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը: Այս բացը լրացնելու համար «Մուսուլման եղբայրների» տեսաբանները ստիպված էին վերանայել և վերաձևակերպել միջնադարյան կրոնական մի շարք տեսություններ, որոնք առնչվում էին ոչ իսլամական հասարակություններում մուսուլմանների ապրելու թույլատրելիությանը, մուսուլմանների և ոչ մուսուլմանների փոխհարաբերություններին և այլ էական խնդիրների, որոնց Եվրոպայում ապրող մուսուլմանները բախվում էին ամեն օր[8]:

---

[7] Պատահական չէ, որ ընտանիքների վերամիավորման գործընթացը ուղեկցվեց Եվրոպայում մզկիթների քանակի կտրուկ աճով: Տե՛ս Nielsen J., *Muslims in Western Europe*, 117:

[8] Բացի վերոնշյալ հարցադրումներից կան նաև մի շարք խնդիրներ՝ կապված «Մուսուլման եղբայրների» ներքին գաղափարախոսության հետ, օրինակ՝ Հասան ալ-Բաննայի դեմ լինելը ḥizbiyyah-ին՝ բազամակուսակցական համակարգին: Ինչպես գրում է ամերիկացի հետազոտող Քարրի Ռոզեֆսկի Վիքհեմը, Հասան ալ-Բաննային բացահայտորեն քննադատելը կամ նրա գաղափարներից և նախանշած ուղուց շեղվելը բացասաբար է ընդունվում շատ իխվանների կողմից, և այն քիչ դեպքերում, երբ որևէ անդամ փորձում է դեմ գնալ Հասան ալ-Բաննային և տարբերվող տեսակետ հայտնել, քննադատության է արժանանում այլ անդամների կողմից: Այս դեպքում, օրինակ, կուսակցությունների դեմ արգելքը շրջանցելու համար առաջ է քաշվում այն թեզը, որ Հասան ալ-Բաննան դեմ է եղել ոչ թե

Ակնհայտ է, որ տեղի են ունենում փոփոխություններ, որոնք «Մուսուլման եղբայրների» ժամանակակից շարժումը տարբերակում և առանձնացնում են 1928 թվականին Հասան ալ-Բաննայի ստեղծած կազմակերպությունից, և թեև շարժման «դասական» գաղափարախոսները շարունակում են կարևոր դեր խաղալ այս նոր շարժման մեջ և պարբերաբար մեջբերվում են նրա ժամանակակից անդամների կողմից, նրանց կողքին ականատես ենք լինում նոր գաղափարախոսների ի հայտ գալուն, որոնց մեջ հատկապես կարևոր են եգիպտացի իսլամական իրավագետ Յուսուֆ ալ-Կարադավին[9] և իրաքցի իսլամական իրավագետ Տահա

ընդհանրապես բազմակուսակցական համակարգին, այլ նրա դիրքորորշումը պայմանավորված է եղել տվյալ ժամանակաշրջանում Եգիպտոսում առկա իրավիճակով՝ այդ թվում եգիպտացի քաղաքական գործիչների կոռումպացված վարքով և թագավորի ու բրիտանացիների կողմից կատարված ընտրական խարդախություններով: Սա ավելի քիչ չափով վերաբերում է նաև Սայյիդ Կուտբին: Կանադացի հետազոտող Ջոն Քալվերտը նշում է, որ Սայյիդ Կուտբի shahīd-ի՝ նահատակի կարգավիճակը իխվանների համար խոչընդոտում է ամբողջովին մերժողական դիրք զբաղեցնել Կուտբի թողած ժառանգության նկատմամբ: Ուստի այս և նմանատիպ այլ հարցերը բավականին նուրբ մոտեցում են պահանջում: Այս խնդրի շուրջ ավելի մանրամասն տե՛ս Wickham C. R., *'What Would Hasan Al-Banna Do?: Modern (Re-)Interpretations of the Brotherhood's Founding Discourse'*, The Muslim Brotherhood in Europe, Bakker E. (ed.), Meijer R. (ed.), 2013, 240-248, https://doi.org/10.1093/acprof:oso/9780199327638.001.0001; Calvert J., *Wayward Son: The Muslim Brothers' Reception of Sayyid Qutb*, The Muslim Brotherhood in Europe, Bakker E. (ed.), Meijer R. (ed.), 2013, 249-271, https://doi.org/10.1093/acprof:oso/9780199327638.003.0012:

[9] Յուսուֆ ալ-Կարադավին (1926-2022) 20-21 դդ. մուսուլման ամենաազդեցիկ գիտնականներից և իրավագետներից մեկն է: Նա հատկապես հայտնի է կատարական ալ-Ջազիրա հեռուստատեսությամբ հեռարձակվող al-Sharīʿah wa al-Ḥayāt («Շարիաթ և կյանք») հաղորդումից, որում նա պարբերաբար հյուրընկալվում էր և քննարկում իսլամի հետ առնչվող տարատեսակ հարցեր: Ալ-Կարադավին ղեկավար պաշտոններ է զբաղեցրել «Մուսուլման եղբայրների» հետ առնչություն ունեցող մի շարք կազմակերպություններում, օրինակ՝ էական դերակատարություն է ունեցել «Ֆետվայի և ուսումնասիրությունների եվրոպական խորհրդի» (The European Council for Fatwa and Research, ECFR) ստեղծման մեջ և տևական ժամանակ զբաղեցրել է նրա տնօրենի պաշտոնը: Թեև կյանքի ավելի ուշ շրջանում հերքել է իր անդամակցությունը «Մուսուլման եղբայրներին», նա

Ջաբիր ալ-Ալվանին[10], որոնք հիմնաքարային դեր են խաղացել իրավական մի շարք հայեցակարգերի մշակման գործում, որոնց անդրադարձ կկատարվի ստորև:

«Մուսուլման եղբայրների» գաղափարախոսությունը իսլամական մտքի տարբեր բևեռների կենտրոնում. wasaṭiyya-ի ուսմունքը

Հասան ալ-Բաննան իսլամը տեսնում էր որպես ինքնաբավ համակարգ և կենսակերպ, որն արդիական է բոլոր ժամանակների և ցանկացած տեղի համար: Սա իր արտահայտությունն է գտել նրա մշակած shumuliyyat al-islām հայեցակագի մեջ, որը կարելի է սահմանել որպես «իսլամի համընդգրկունության մասին ուսմունք»: Հասան ալ-Բաննան կարծում էր, որ իսլամը պետք է դրվի ամեն ինչի հիմքում, և մուսուլմանները չպետք է այն տարանջատեն իրենց կյանքի մյուս ոլորտներից, այլ պետք է ձգտեն ինտեգրել այն իրենց առօրյա կյանքում: Ըստ այս հայեցակարգի՝ իսլամը պարզապես կրոն չէ, այլ՝ անկախ և ինքնաբավ համակարգ և կենսակերպ, որով կարգավորվում են մարդու կյանքի բոլոր բնագավառները՝ անձնական, սոցիալական, տնտեսական, քաղաքական և այլն:

Իսլամի՝ կենսակերպ լինելու թեզը իրենից ենթադրում է, որ անհրաժեշտ է ճկունություն ցուցաբերել և հարմարվել ժամանակակից աշխարհի պահանջներին և պայմաններին: Արդյունքում «Մուսուլման եղբայրների» տեսաբանները մշակեցին

համարվում է վերջինիս գլխավոր տեսաբաններից մեկը, և նրա գրքերն ու ֆետվաները պարբերաբար կիրառվում և մեջբերվում են շարժման անդամների կողմից:

[10] Ծագումով իրաքցի Տահա Ջաբիր ալ-Ալվանին (1935-2016) ԱՄՆ-ում «Մուսուլման եղբայրների» հիմնական ներկայացուցիչներից մեկն էր, որտեղ հիմնել և երկար տարիներ ղեկավարել է «Հյուսիսային Ամերիկայի ֆիկհի խորհուրդը» (Fiqh Council of North America), ինչպես նաև ղեկավարել է Վիրջինիա նահանգում տեղակայված Կորդոբայի համալսարանը: Այս երկու կառույցներն էլ ԱՄՆ-ում «Մուսուլման եղբայրների» ցանցի մաս են կազմում:

մի շարք կարևոր հայեցակարգեր՝ նպատակ հետապնդելով համակարգել Եվրոպայի մուսուլմանական փոքրամասնությունների կյանքի բոլոր ոլորտները: Այդ հայեցակարգերի էությունը կայանում է իսլամական ինքնության պահպանման և եվրոպական հասարակությունների հետ ձուլումը կանխելու մեջ, որը, սակայն, միևնույն ժամանակ թույլ կտա մուսուլմանների ինտեգրումը այս հասարակությունների մեջ՝ կանխելով նրանց մեկուսացումն ու մուսուլմանական գետտոների առաջացումը[11]: Այս միտքը լավագույնս արտահայտել է Յուսուֆ ալ-Կարադավին իր հայտնի դարձած խոսքում՝ «պահպանողականություն՝ առանց մեկուսացման և ազատականություն՝ առանց ձուլվելու»[12]:

Այս հայեցակարգերի մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում wasaṭiyya-ն՝ «չափավորության» կամ «միջին ճանապարհի» ուսմունքը: Թեև այն ավելի խորը արմատներ ունի, wasaṭiyya-ն նոր շունչ է ստացել 20-րդ դարի երկրորդ կեսին մեկնարկած վերոնշյալ իրադարձությունների լույսի ներքո և դրանց թելադրանքով: Նրա գլխավոր տեսաբաններից մեկը Յուսուֆ ալ-Կարադավին է, որի

[11] Այս առնչությամբ հետաքրքրության է արժանի Եվրոպայում «Մուսուլման եղբայրների» գլխավոր կառույցի՝ «Եվրոպացի մուսուլմանների խորհրդի» (Council of European Muslims, CEM) կողմից 2000-ական թթ. հրատարակված «Եվրոպայի մուսուլմանների խարտիա» անվանումը կրող փաստաթուղթը, որում լավագույնս արտահայտված են Եվրոպայում մուսուլմանների կեցության շուրջ «Մուսուլման եղբայրների» գաղափարները: Այս փաստաթուղթն ուղղված է Եվրոպայի մուսուլմաններին և կոչ է անում նրանց ինտեգրվել եվրոպական երկրների հասարակություններում և ակտիվորեն մասնակցել նրանց հասարակական-քաղաքական կյանքին: Ըստ էության, սա CEM-ի առաջին փորձն էր ուրվագծել իսլամի իր ընկալումն ու այս կարևոր հարցերում իր դիրքորոշումը: Տե՛ս *Muslims of Europe Charter*, Council of European Muslims, https://www.eumuslims.org/en/islam-europe, մուտք՝ 22.03.2023:

[12] "Muḥāfaẓa dūn inġilāq, infitāḥ dūn ḏawbān", Yūsuf al-Qaraḍāwi, *Awlawiyyāt al-Ḥaraka al-Islāmiyya*, (Lubnān: Dār al-Risāla, 2000), 171.

աշխատություններում այս հայեցակարգի ուսումնասիրությունը կենտրոնական տեղ է զբաղեցնում[13]:

Wasaṭiyya տերմինը ծագում է արաբերեն wasaṭ բառից, որը կարելի է թարգմանել որպես «մեջտեղ», «արդար», «չափավոր»: Wasaṭ տերմինը վերցված է Ղուրանից: Այն հիշատակվում է, օրինակ, 68:28 այաթում՝ qāl awsaṭuhum (նրանցից ամենաարդարներն ասացին), ինչպես նաև 2:143 այաթում, որում մասնավորպես ասվում է, որ Ալլահը մուսուլմաններին «դարձրել է» ummatan wasaṭan՝ «միջանկյալ ումմա», որպեսզի նրանք լինեն «վկաներ» (shuhadāʾ) ողջ մարդկության համար, իսկ Մուհամմադ մարգարեն լինի նրանց վկան[14]:

Wasaṭiyya-ի հայեցակարգի մեջ դրված է չափավորության, «աշխարհիկության և արմատականության միջև միջին ճանապարհ լինելու»[15] գաղափարը, որը Ալ-Կարադավին համարում է իսլամի հիմնական հատկանիշներից ու առանձնահատկություններից մեկը: Դրա էությունը կայանում է ոչ իսլամական միջավայրում մուսուլմանների կյանքի տարբեր ոլորտների (կրոն, աշխատանք, ընտանիք) ներդաշնակեցման մեջ: Այն խրախուսում է մուսուլմաններին ներգրավվել այդ երկրների քաղաքական և հասարակական կյանքում, լինել հարգալից այլ կրոնների և մշակույթների ներկայացուցիչների նկատմամբ, զերծ մնալ կրոնական ծայրահեղականությունից և ֆանատիզմից, սակայն միևնույն ժամանակ մնալ զգոն և հավատարիմ իսլամական արժեքներին:

---

[13] Այս հարցի շուրջ նրա հիմնական մտքերը ամփոփված են հետևյալ աշխատության մեջ. Yūsuf al-Qaraḍāwi, *Fiqh al-Wasatiyya al-Islāmiyya wa al-Tajdīd* (Markaz al-Qaraḍāwi li al-Wasatiyya al-Islāmiyya wa al-Tajdīd, 2009):

[14] Այս հարցի շուրջ ավելի մանրամասն տե՛ս Քոչարյան Հ. Մ., *Ումմայի կարգավիճակն ու բնորոշումը Ղուրանում և վաղ իսլամական սկզբնաղբյուրներում* (Երևան, 2005):

[15] Vidino L., *Aims and Methods of Europe's Muslim Brotherhood.*

Wasaṭiyya-ն լիովին համահունչ է «Մուսուլման եղբայրների» գաղափարախոսությանը: «Մուսուլման եղբայրների» գաղափարախոսությունը միջին տեղ է զբաղեցնում իսլամական տարբեր հոսանքների և ուղղությունների մեջ: Դեռևս Հասան ալ-Բաննան իր նորաստեղծ շարժում-կազմակերպությունը դնում էր իսլամական մտքի տարբեր բևեռների կենտրոնում: Դրա լավագույն օրինակներից մեկն այն է, որ «Մուսուլման եղբայրները» չի հանդիսանում որևէ կոնկրետ մազհաբի՝ կրոնաիրավական դպրոցի հետևորդ՝ անհրաժեշտ համարելով իրավական վճիռներ կայացնելիս չսահմանափակվել միայն մեկ մազհաբի սահմաններում[16]:

Իսկ սուֆիականության[17] հետ, օրինակ, «Մուսուլման եղբայրները» կիսում է հոգևոր ասպեկտի կարևորությունը, սակայն տարակարծիք է նրա հետ և չի ընդունում միստիկների՝ հասարակությունից ամբողջությամբ մեկուսանալու և միայն Ալլահի պաշտամունքին նվիրվելու պրակտիկան և կարևորում է մասնակցությունն ու ներգրավվածությունը հասարակական և քաղաքական կյանքին[18]: Ալ-Կարադավին ոչ միայն թույլատրելի է

[16] Այս մասին խոսել է դեռևս Հասան ալ-Բաննան, ով կարևոր էր համարում իրավական վճիռներ կայացնելիս առավելություն չտալ միայն մեկ մազհաբի: Իսկ Ալ-Կարադավին այս առնչությամբ գրում է, որ թեև պետք է դուրս գալ կոնկրետ մազհաբի հետևելու պարտադրանքից, սակայն միևույն ժամանակ չի կարելի բոլոր չորս մազհաբներին հակասող վճիռ կայացնել: Տե՛ս Yūsuf al-Qaraḍāwi, *Fī Fiqh al-Aqalliyyāt al-Muslima* (al-Qāhira: Dār al-Shurūq, 2001), 57-60:

[17] Սուֆիականությունը (արաբերեն՝ al-ṣūfiyya կամ al-taṣawwuf) 8-րդ դարի երկրորդ կեսին իսլամում առաջացած միստիկական և հոգևոր ուղղություն է, որի նպատակը Ալլահի հետ ներքին կապի խորացումը և նրա հետ մտերմության ձգտումն է: Սուֆիականության հետևորդները՝ սուֆիները, հոգևոր տարբեր վարժանքների միջոցով ձգտում են հասնել հոգևոր մաքրության, ներքին խաղաղության և կատարելության: Տե՛ս William C. Chittick, *"Taṣawwuf"*, The Encyclopaedia of Islam, vol. 10 (Leiden: Brill, 2000), 313-324:

[18] Այստեղ կարևոր դեր է խաղում այն հանգամանքը, որ Հասան ալ-Բաննան դեռևս պատանի հասակում հետաքրքրված է եղել սուֆիականությամբ և եղել է

համարում արևմուտքի երկրներում մուսուլմանների բնակվելը և դրանց հասարակա և քաղաքական կյանքում նրանց ակտիվ ներգրավվածությունը, այլև նշում է, որ «այս դարում իսլամի համար անհրաժեշտություն է իր ներկայությունը հաստատել այն հասարակություններում, որոնք ազդեցություն ունեն համաշխարհային քաղաքականության վրա»[19]: Իսկ Ալ-Ալվանին գրում է, որ մուսուլմանների ներկայությունը ցանկացած երկրում պետք է հարատև բնույթ կրի, այլ ոչ թե՝ ժամանակավոր՝ պայմանավորված իսլամական աշխարհում քաղաքական և տնտեսական պատճառներով. որպես օրինակ նա բերում է Մուհամմադ մարգարեի ժամանակ Հաբաշա՝ Եթովպիա, գաղթած մուսուլմաններին: Նրանց փախուստը պայմանավորված էր Մեքքայում ստեղծված պայմաններով, որոնք ուղղակիորեն վտանգում էին մուսուլմանների կյանքը: Սակայն երբ 630 թվականին Մուհամմադ մարգարեն գրավեց Մեքքան, Եթովպիա գաղթած մուսուլմանները հետ չվերադարձան, այլ, մնալով Եթովպիայում, ձեռնամուխ եղան այնտեղ իսլամի քարոզմանը և տարածմանը: Նույնկերպ էլ Եվրոպայում բնակություն հաստատած մուսուլմանները պետք է ոչ միայն շարունակեն ապրել այնտեղ, այլև ակտիվորեն ներգրավվեն այդ երկրների քաղաքական և հասարակական կյանքում՝ հավատարիմ մնալով իսլամի ʿālamiyya-ին՝ գլոբալ բնույթին: Ընդ որում, Ալ-Ալվանին դա համարում է ոչ թե

Հասաֆիյյա տարիկայի (սուֆիական եղբարություն) անդամ: Վերջինս առաջացել է Շազիլիյյա տարիկայից, որը հասարակակենտրոն էր և չէր ընդունում այլ սուֆիների՝ հասարակությունից մեկուսանալու պրակտիկան: Հասարակությունից մեկուսանալու փոխարեն այն նպատակ էր հետապնդում ամրապնդել իսլամը մարդկանց կյանքում և սոցիալական հարաբերություններում: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Richard P. Mitchell, *The Society of the Muslim Brothers*, (New York: Oxford University Press, 1969), 1-6:

[19] Al-Qaraḍāwi, *Awlawiyyāt al-Ḥaraka al-Islāmiyya*, 170.

մուսուլմանների իրավունքը (ḥaqq), այլ՝ պարտականությունը (wājib)[20]:

Սալաֆիների[21] հետ մուսուլման եղբայրները համամիտ են այն հարցում, որ իսլամական իրավունքի գլխավոր աղբյուրները՝ Ղուրանն ու Սուննան, պետք է անհերքելի հեղինակություն լինեն իրավական վճիռների կայացման համար, սակայն նաև կարևորում են իսլամական իրավունքի երկրորդական աղբյուրների կիրառումը: Եթե սալաֆիները միայն salaf-ի կողմից կիրառված մեթոդներն են ընդունելի համար, իխվանները կարծում են, որ յուրաքանչյուր ժամանակաշրջան ունի իր առանձնահատկություններն ու կարիքները, և նոր մեթոդների կիրառումն ու իրավական նոր վճիռների ընդունումն անխուսափելի է: Սա պայմանավորված է իսլամի գլոբալ բնույթով (ʿālamiyyah). իսլամը նախատեսված է ողջ մարդկության և բոլոր ժամանակների համար, հետևաբար այն չի կարելի սահմանափակել միայն որոշակի ժամանակաշրջանով՝ զրկվելով ժամանակակակից հասարակություններում կարևոր գործոն լինելու հնարավորությունից: Ալ-Ալվանին այս առնչությամբ գրում է, որ անցյալի իրավագետները չեն ապրել նույն պայմաններում, ինչ մենք: Այժմ մշակույթների փոխներգործության և համակեցության ժամանակաշրջան է, իսկ անցյալի իրավագետները ապրել են բաժանված և մեկուսացված աշխարհում, դրա համար տիրապետող է եղել է fiqh al-ḥarb-ը՝ «պատերազմի ֆիկհը», սակայն իր տեսակով տարբեր այսօրվա աշխարհում մուսուլմանական աշխարհին անհրաժեշտ է fiqh al-taʿāyush՝ «համակեցության ֆիկհ»: Միջնադարյան շրջանի մի շարք հեղինակների և իրավագետների

[20] Ṭaha Jābir al-ʿAlwāni, *Madxal ila Fiqh al-Aqalliyyāt (Naẓarāt Taʾasīsiyya)*, 1999, https://citj.org/index.php/citj/article/view/1775, 18-19.

[21] Սալաֆիականությունը ուղղություն է իսլամում, որի հետևորդները՝ սալաֆիները, կոչ են անում հետևել և առաջնորդվել միայն Մուհամմադ մարգարեի և «բարեպաշտ նախնիների» (al-Salaf al-Ṣāliḥ)՝ իսլամի առաջին երեք սերունդների օրինակով:

աշխատությունները (այդ թվում՝ Իբն Թայմիյյայի) իրենց ապրած ժամանակաշրջանի և պայմանների արձագանքն են և չեն կարող հավասարաչափ տարածվել նաև ժամանակակից աշխարհի վրա: Ալ-Ալվանին հավելում է, որ fiqh al-taʿayush-ի այլընտրանքը պայքարի մշակույթն (ṭaqāfat al-ṣirāʿ) է, ինչի կարիքը իսլամական փոքրամասնությունները չունեն[22]:

Ինչ վերաբերում է իխվանների դիրքորոշմանը իսլամական արմատականության նկատմամբ, ապա, թեև նրանք դեմ չեն արտահայտվում ջիհադի[23] հայեցակարգին, սակայն կարծում են, որ ջիհադը պետք է հստակ սահմանափակումներ ունենա: Ի տարբերություն իսլամական արմատականների, որոնք ջիհադը յուրաքանչյուր մուսուլմանի անհատական պարտականությունն (farḍ ʿayn) են համարում՝ մուսուլման եղբայրները ջիհադը խմբակային պարտականություն (farḍ kifāyah) են համարում: Բայց օրինակ Պաղեստինի պարագայում նրանք անհատական ջիհադը նույնպես թույլատրելի են համարում, ինչը բավականին լուրջ վիճաբանությունների տեղիք է տվել՝ հարվածի տակ դնելով եվրոպական կառավարությունների մոտ նրանց ստեղծած չափավոր իսլամականների կերպարը[24]:

Եվրոպան՝ որպես dār al-daʿwa

Wasaṭiyya-ի ուսմունքի մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում dār al-daʿwa[25] (քարոզի տարածք) հասկացությունը: Իսլամական

---

[22] Al-ʿAlwāni, *Madxal ila Fiqh al-Aqalliyyāt*, 6-7.

[23] Jihād տերմինը ծագում է արաբերեն jahada բառից, որը նշանակում է ջանալ, ջանք թափել: Եզրույթի կրոնագաղափարական իմաստը Ալլահի ճանապարհին ջանք գործադրելն է: Տարբերակվում են ջիհադի երկու հիմնական տեսակներ՝ «մեծ ջիհադ», որը մարդու ներքին պայքարն է սատանայի ազդեցությունից ազատվելու համար, և «փոքր ջիհադ», որը սրբազան պատերազմն է անհավատների դեմ:

[24] Rich D., *The Very Model of a British Muslim Brotherhood, The Muslim Brotherhood: The Organization and Policies of a Global Islamist Movement*, ed. Rubin B. (New York, 2010), 117-136.

[25] Daʿwa տերմինը արաբերենից թարգմանաբար նշանակում է հրավեր, կոչ, կանչ: Ղուրանում daʿwa-ն Ալլահի և նրա մարգարեների կողմից մարդկանց ուղղված կոչն

ավանդական իրավագիտության մեջ աշխարհը բաժանված է երկու մասի՝ dār al-islām (իսլամի տարածք) և dār al-ḥarb (պատերազմի տարածք): Ավանդաբար dār al-islām են համարվում այն տարածքները, որտեղ մուսուլմանները մեծամասնություն են կազմում, և որտեղ գործում է իսլամական իրավունքը: Սա ապահով և խաղաղ տարածք է, որտեղ մուսուլմանները ազատ են դավանել իրենց կրոնը և հետևել շարիաթին: Պատմականորեն dār al-islām-ի մաս են կազմել այն տարածքները, որոնք եղել են մուսուլմանների տիրապետության տակ, օրինակ՝ Արաբական թերակղզին, Հյուսիսային Աֆրիկան, Իսպանիան և Ասիայի որոշ շրջաններ: Իսկ dār al-ḥarb-ը ոչ իսլամական տարածքներն են, որտեղ ֆիկհի և շարիաթի նորմերը չեն գործում: Ավանդական իսլամական իրավունքի տեսանկյունից այս տարածքները ընկալվում են որպես անկայունության օջախներ, որտեղ մուսուլմանները կարող են կոնֆլիկտային իրադրությունների մեջ հայտնվել ոչ մուսուլմանների հետ, և որտեղ իսլամ դավանելն ու այն քարոզելը անօրինական են:

Պատմականորեն dār al-ḥarb-ի մեջ է մտել նաև Եվրոպան (բացառությամբ Իսպանիայի, որը մինչև 15-րդ դարի վերջ իսլամական աշխարհի մաս էր կազմում): Սակայն 20-րդ դարում ակնհայտ դարձավ, որ իրադրությունը կտրուկ փոխվել է. թեև Եվրոպայում մուսուլմանները մեծամասնություն չեն կազմում, և

է հետևել Ալլահի կրոնին (տե՛ս, օրինակ, Ղուրան 12:108, 16:125, 41:33): Մուհամմադի պարտականությունը իսլամի «հրավերը» (daʿwat al-Islām) մարդկանց փոխանցելն էր: Հետագայում, հատկապես իսմայիլիների շնորհիվ, daʿwah-ի իմաստային շրջանակները ավելի են ընդլայնվել՝ ներառելով նաև մուսուլմանների կողմից իրականացվող քարոզչությունը: Դրա բաղկացուցիչ մասերից մեկն էլ ոչ մուսուլմանների շրջանում իրականացվող daʿwa-ն է, որի նպատակը նրանց իսլամ ընդունելն է: Ավելի մանրամասն տե՛ս Canard M., *Daʿwa*, The Encyclopaedia of Islam, vol. 2 (Leiden: Brill, 1991), 168-170 և Poston L., *Islamic Da'wah in the West* (New York: Oxford University Press, 1992):

իսլամական իրավունքն օրենքի ուժ չունի, բայց մուսուլմաններն ունեն հավասար իրավունքներ և հետապնդման չեն ենթարկվում իրենց կրոնը դավանելու համար: Դեռ ավելին, օգտվելով եվրոպական հասարակությունների ընձեռած ազատություններից՝ նրանք կարող են ազատորեն զբաղվել իսլամի քարոզչությամբ և տարածմամբ: Հետևաբար, Եվրոպան չի կարող համարվել dār al-ḥarb: Այս հարցի քննարկմանն էր նվիրված 1991 թվականին Ֆրանսիայի իսլամական կազմակերպությունների միության (Union of Islamic Organizations in France, UIOF)[26] կողմից կազմակերպված սեմինարը, որի ժամանակ իսլամական անվանի իրավագետներ Յուսուֆ ալ-Կարադավին, Ֆայսալ ալ-Մաուլավին և Աբդուլլահ Ջաբալլահը եկան ընդհանուր եզրակացության առ այն, որ աշխարհի բաժանումը dār al-islām-ի և dār al-ḥarb-ի այլևս չի արտացոլում իրականությունը: Այսպես, ավանդական երեք բաժանումներին ավելացվում է նաև dār al-daʿwa-ն, համաձայն որի Եվրոպան ո՛չ dār al-ḥarb է, ո՛չ էլ՝ dār al-islām, այլ՝ dār al-daʿwa[27]՝ տարածք, որտեղ պետք է բացառապես խաղաղ միջոցներով իրականացնել իսլամի տարածումը[28]: Ալ-Կարադավին այս

[26] Ֆրանսիայի իսլամական կազմակերպությունների միությունը (Union of Islamic Organizations in France, UIOF), որը հետագայում վերանվանվեց «Ֆրանսիայի մուսուլմաններ» (Muslims of France, MF), «Մուսուլման եղբայրների» գլխավոր կազմակերպությունն է Ֆրանսիայում: Այն անձրևանոց կազմակերպություն է և վերահսկում է Ֆրանսիայում «Մուսուլման եղբայրների» ցանցին պատկանող այլ կազմակերպությունների գործունեությունը: Պաշտոնական կայքը՝ https://www.musulmansdefrance.fr/, մուտք՝ 01.11.2023:

[27] Հարկ է նշել, որ dār al-daʿwa-ին զուգահեռ, սակայն ավելի պակաս հաճախականությամբ, կիրառվում են նաև մի քանի այլ տերմիններ, օրինակ՝ dār al-ʿahd (պայմանագրի տարածք), dār al-shahāda (շահադայի տարածք) և այլն:

[28] Հասան ալ-Բաննան շարժման նպատակների մեջ հստակորեն նշում է, թե ինչ պետք է հաջորդի մուսուլմանական հասարակություններից արևմտյան արժեքները մաքրելուց և իսլամական արժեքները վերականգնելուց հետո. «Մենք չենք կանգնի այստեղ: Մենք այս չարիքը հետ կուղարկենք իր բնօրրան, կնվաճենք նրա տունը և կպայքարենք, մինչև աշխարհը չցնծա Մարգարեի անունով, և իսլամի

առնչությամբ մասնավորապես ասում է, որ բիրտ ուժի կիրառումը միայն կարող է վախեցնել և վանել հավանական դավանակիցներին, և եվրոպական հասարակությունների բարեփոխմանն (iṣlāḥ) ու նորացմանը (tajdīd) հնարավոր է հասնել միայն խաղաղ քարոզի միջոցով[29]: Ալ-Ալվանին նույնիսկ մեկ քայլ առաջ է գնում և ասում է, որ իսլամը աշխարհագրական սահմաններ չունի, և dār al-islām համարվում է այն տարածքը, որտեղ մուսուլմանը հնարավորություն ունի ազատորեն դավանել իր կրոնը անկախ նրանից՝ ապրում է մեծամասնության թե փոքրամասնության մեջ[30]: Այպիսով, Եվրոպան նույնպես Ալ-Ալվանին մտցնում է dār al-islām-ի մեջ:

ուսմունքը չտարածվի ողջ աշխարհում: Միայն այդ ժամանակ մուսուլմանները կհասնեն իրենց գլխավոր նպատակի իրականացմանը»: «Մուսուլման եղբայրների» ժամանակակից առաջնորդները նույնպես նման տեսակետեր են կիսում: 2004 թվականին Եգիպտոսի «Մուսուլման եղբայրների» մուրշիդ (գլխավոր առաջնորդ) Մոհամմեդ Ակեֆը հայտարարեց, որ նա «միանշանակորեն վստահ է, որ իսլամը կնվաճի Եվրոպան և Ամերիկան»: Ալ-Կարադավին նույնպես պարբերաբար նմանատիպ կարծիքներ է հայտնել: 1995 թվականին Տոլեդոյում անցկացվող իսլամական մի կոնֆերանսի ժամանակ նա ասել է. «Մենք կնվաճենք Եվրոպան, կնվաճենք Ամերիկան, ոչ սրով, այլ՝ դաավայով»: 2002 թվականին IslamOnline-ում հրապարակված մի ֆետվայում նա կրկնում է իր խոսքերը. «Իսլամը կվերադառնա Եվրոպա որպես նվաճող և հաղթանակող նրանից երկու անգամ աքսորվելուց հետո: Այս անգամ նվաճումը սրով չի լինի, այլ՝ դաավայով և գաղափարախոսությամբ»: Տե՛ս Ḥasan al-Banna, *Majmūʿat al-Rasāil* (al-Maktaba al-Tawfīqiyya, 1984), 153; Yusuf al Qaradawi, MAYA Conference, 1995, Toledo, Ohio. Transcript available at: https://www.investigativeproject.org/profile/167/yusuf-al-qaradawi, մուտք՝ 20.02.2023; *"Leading Sunni Sheikh Yousef al-Qaradhawi and Other Sheikhs Herald the Coming Conquest of Rome"*, Middle East Media and Research Institute, MEMRI Special Dispatch No. 447 (December 6, 2002), մուտք՝ 20.02.2023; *"New Muslim Brotherhood Leader: Resistance in Iraq and Palestine is Legitimate; America is Satan, Islam Will Invade America and Europe"*, MEMRI Special Dispatch No. 655 (February 4, 2004), մուտք՝ 20.02.2023:

[29] Yūsuf al-Qaraḍāwi, *Fī Fiqh al-Aqalliyyāt al-Muslima*, 32.

[30] Al-ʿAlwāni, *Madxal ila Fiqh al-Aqalliyyāt*, 15.

Fiqh al-aqalliyyāt-ի էությունը և նրա անհրաժեշտության հիմնավորումը

Ընդունելով, որ Եվրոպայի մուսուլմանների կյանքը տարբերվում է իսլամական հասարակություններում ապրող մուսուլմանների կյանքից, և Եվրոպայի մուսուլմանները առնչվում են այնպիսի խնդիրների, որոնք առկա չեն մուսուլմանական երկրներում, Ալ-Կարադավին և Ալ-Ալվանին առաջ քաշեցին այն թեզը, որ Եվրոպայի մուսուլմանների կյանքի կարգավորման համար անհրաժեշտ է մշակել իրավական նոր շրջանակ: Արդյունքում իսլամական իրավագիտության մեջ նոր բաժին առաջացավ, որը ստացավ fiqh al-aqalliyyāt (փոքրամասնությունների ֆիկհ) անվանումը: Դրա նպատակը Եվրոպայի մուսուլման փոքրամասնությունների կյանքը կարգավորող և համակարգող իրավական վճիռների ընդունումն է:

Ալ-Կարադավիի ձևակերպմամբ՝ ինչպես արևմուտքի մուսուլման փոքրամասնություններն են մուսուլմանական գլոբալ ումմայի մի մասը կազմում, այնպես էլ fiqh al-aqalliyyāt-ը ընդհանուր ֆիկհի սահմաններից դուրս չէ, այլ նրա բաղկացուցիչ մասերից մեկն է կազմում, և նրա աղբյուրները նույնն են, ինչ վերջինինը: Որպես օրինակ նա բերում է ֆիկհի սահմաններում նմանատիպ այլ բաժանումների գոյությունը, օրինակ՝ al-fiqh al-ṭibbi («բժշկության ֆիկհ»), al-fiqh al-siyāsi («քաղաքական ֆիկհ»), al-fiqh al-iqtiṣādi («տնտեսական ֆիկհ») և այլն[31]:

Ալ-Ալվանիի մոտ նույնպես նմանատիպ ձևակերպում ենք տեսնում: Նա մասնավորապես նշում է, որ fiqh al-aqalliyyāt-ը «նույն ընդհանուր ֆիկհն է (fiqh al-jamāʿah)՝ սահմանակափակված հատուկ պայմաններով, ուստի նրանում կարող են թույլատրված

[31] Yūsuf al-Qaraḍāwi, *Fī Fiqh al-Aqalliyyāt al-Muslima*, 32.

լինել բաներ, որոնք ուրիշ դեպքերում արգելված են»[32]: Ալ-Ալվանին fiqh al-aqalliyyāt-ի առաջացման մի շարք պատճառներ է նշում: Առաջին հերթին, նա դա բացատրում է այն հանգամանքով, որ մուսուլմանները Մուհամմադ մարգարեի ժամանակաշրջանից ի վեր երբեք ստիպված չեն եղել արտագաղթել dār al-islām-ի սահմաններից դուրս, և եթե ինչ-որ հանգամանքների բերումով մուսուլմանը ստիպված է եղել լքել իր բնակության վայրը, նա հաստատվել է իսլամական ընդարձակ կայսրության մեջ մեկ այլ վայրում՝ չզգալով օտարություն և մեկուսացվածություն[33]:

Ալ-Կարադավին և Ալ-Ալվանին fiqh al-aqalliyyāt-ի անհրաժեշտությունը բացատրում են արևմուտքի մուսուլման փոքրամասնությունների կյանքի առանձնահատկություններով: Արևմուտքի մուսուլմանները ապրում են dār al-islām-ից դուրս, նրանք ստիպված են հաշվի նստել տվյալ հասարակությունների օրենքների հետ, ընդ որում՝ դրանք որոշ դեպքերում կարող են հակասել շարիաթին: Հետևաբար կա իջթիհադի[34] անհրաժեշտություն, քանի որ մուսուլմանները դուրս են եկել իրենց պատմականորեն զբաղեցրած տարածքներից, ինչի հետևանքով բազմաթիվ նոր հարցեր ու խնդիրներ են առաջացել: Հաշվի առնելով այս ամենը՝ նրանք կարիք ունեն հատուկ ֆիկհի, որը կխարսխվի

[32] Al-ʿAlwāni, *Madxal ila Fiqh al-Aqalliyyāt*, 3.

[33] Al-ʿAlwāni, *Madxal ila Fiqh al-Aqalliyyāt*, 3.

[34] Իրավունք, որը տրվում է լիազորված ֆակիհին՝ ինքնուրույն որոշումներ ընդունելու կրոնաիրավական ոլորտին վերաբերող հարցերում՝ հիմնվելով Ղուրանի և Սուննայի վրա և ղեկավարվելով ֆիկհի հիմնական մեթոդներով: Իջթիհադի իրավունք ունեցող ֆակիհին անվանում են մուջթահիդ: Հիմնական մազհաբների ձևավորումից հետո սուննիական իսլամում ընդունվեց այն մոտեցումը, որ այսուհետ իջթիհադը աննպատակ է, ուստի 10-րդ դարում հայտարարվեց, որ «իջթիհադի դռները փակվել են»: Շիայական իսլամում իջթիհադը շարունակում են կիրառել: Տե՛ս Հայաստանը և տարածաշրջանը, Հիմնական հասկացություններ, ԵՀՀ, 2021, էջ 121:

իրավական ամուր հենքի վրա և հաշվի կառնի ժամանակի և առկա պայմանների առանձնահատկությունները:

Այս առնչությամբ հսկայական է «Ֆետվայի և ուսումնասիրությունների եվրոպական խորհրդի»[35] (The European Council for Fatwa and Research, ECFR) դերը, որը ստեղծվել է հենց այս խնդիրների լուծման նպատակով: Այն իրավագիտական մարմին է, որի կողմից ամեն տարի բազմաթիվ ֆետվաներ են ընդունվում, որոնք առչնվում են ընտանեկան իրավունքին, տնտեսական, սոցիալական բազմաթիվ հարցերի, որոնց Եվրոպայում ապրող մուսուլմանները բախվում են ամեն օր: Խորհրդի հիմնադիրը Յուսուֆ ալ-Կարադավին է, որը մինչև 2018 թվականը զբաղեցրել է նրա նախագահի պաշտոնը: ECFR-ի անդամների մեծամասնությունը «Մուսուլման եղբայրների» անդամներ են, ընդ որում՝ ոչ միայն եվրոպական, այլև մերձավորարևելյան տարբեր մասնաճյուղերից: Կարևոր է նշել, որ ECFR-ը բացառապես խորհրդակցական մարմին է, և նրա կողմից ընդունված ֆետվաները օրենքի ուժ չունեն:

Եզրակացություն

«Մուսուլման եղբայրներին» հաջողվել է ճկունություն ցուցաբերել մի շարք հարցերում, որոնք վերաբերում են ոչ իսլամական հասարակություններում մուսուլմանների կյանքի տարբեր բնագավառներին: Իխվաններն առաջինն էին, որ գիտակցեցին նոր իրադրությունների պայմաններում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, որոնք ձևավորվել էին 20-րդ դարի երկրորդ կեսին մուսուլմանների՝ Եվրոպայում հաստատվելու արդյունքում: Դեռևս նախորդ դարասկզբին «Մուսուլման եղբայրների» տեսաբանների կողմից

[35] Պաշտոնական կայքը՝ https://www.e-cfr.org/en/, մուտք՝ 01.11.2023:

մշակվել են մի շարք կարևոր տեսություններ, որոնք վերաբերում են իսլամի գլոբալ բնույթին (ʿālamiyyah) և համընդգրկունությանը (shumuliyyat al-islām): Շարժման ժամանակակից տեսաբաններին հաջողվել է զարգացրել այս թեզերը և դրանց կողքին մշակել մի շարք նորերը, որոնցով, առաջին հերթին, իրավական տեսանկյունից հիմնավորվում է ոչ իսլամական հասարակություններում մուսուլմանների կեցությունը և լուծվում է դրա թույլատրելիության հարցը, իսկ մյուս կողմից մշակվում են մի շարք մեխանիզմներ առաջացող խնդիրների լուծման համար: Դա նրանք մեկնաբանում են նրանով, որ ոչ իսլամական հասարակություններում մուսուլմանների կյանքը տարբերվում է իսլամական հասարակություններում մուսուլմանների կյանքից, և հետևաբար այն խնդիրները, որոնց նրանք բախվում են իրենց առօրյա կյանքում, լուծման նոր մեխանիզմներ են պահանջում: Փորձելով բավարարել Եվրոպայի մուսուլմանների կրոնական բոլոր պահանջները՝ իխվանները նպատակ են հետապնդում մոնոպոլիզացնել «եվրոպական իսլամը»: Դա նրանց հնարավորություն կտա դառնալ եվրոպացի մուսուլմանների դե ֆակտո ներկայացուցիչները, ինչի շնորհիվ հնարավոր կլինի եվրոպական կառավարությունների մոտ հանդես գալ ողջ մուսուլմանական փոքրամասնության անունից և ազդեցություն ունենալ նրանց կողմից իսլամի հետ առնչվող ցանկացած հարցի շուրջ քաղաքականության մշակման վրա: Հաշվի առնելով «Մուսուլման եղբայրների» ռեսուրսներն ու մոբիլիզացիոն մեծ ներուժը՝ դա նրան անմրցելի հակառակորդ կդարձնի Եվրոպայում իրենց ներկայությունը հաստատած իսլամական այլ շարժումների և կազմակեպությունների համար:

Գրականության ցանկ

- *al-Qurān al-Karīm*
- Al-Banna, Ḥasan, *Majmūʿat al-Rasāil*. al-Maktaba al-Tawfīqiyya, 1984
- Al-ʿAlwāni, Ṭaha Jābir, Madxal ila Fiqh al-Aqalliyyāt (Naẓarāt Taʾasīsiyya), 1999, https://citj.org/index.php/citj/article/view/1775
- Al-Qaraḍāwi, Yūsuf, *Awlawiyyāt al-Ḥaraka al-Islāmiyya*. Lubnān: Dār al-Risāla, 2000
- Al-Qaraḍāwi, Yūsuf, *Fī Fiqh al-Aqalliyyāt al-Muslima*. al-Qāhira: Dār al-Shurūq, 2001
- Al-Qaraḍāwi, Yūsuf, *Fiqh al-Wasatiyya al-Islāmiyya wa al-Tajdīd*. Markaz al-Qaraḍāwi li al-Wasatiyya al-Islāmiyya wa al-Tajdīd, 2009
- Calvert, J., *Wayward Son: The Muslim Brothers' Reception of Sayyid Qutb*. The Muslim Brotherhood in Europe, Bakker E. (ed.), Meijer R. (ed.), 2013, 249-271, https://doi.org/10.1093/acprof:oso/9780199327638.003.0012
- Canard, M., *Daʿwa*. The Encyclopaedia of Islam, Volume 2, Leiden, 1991, 168-170
- Frampton, M., *The Muslim Brotherhood and the West: A History of Enmity and Engagement*. Harvard University Press, 2018
- Kettani, H., *Muslim Population in Europe: 1950-2020*. International Journal of Environmental Science and Development, Vol. 1, No. 2, June 2010
- *"Leading Sunni Sheikh Yousef al-Qaradhawi and Other Sheikhs Herald the Coming Conquest of Rome,"* Middle East Media and Research Institute, MEMRI Special Dispatch No. 447 (December 6, 2002), մուտք՝ 20.02.2023

- Maréchal, B., *The Muslim Brothers in Europe: Roots and Discourse*, Leiden/Boston, 2008
- Mitchell, R. P., *The Society of the Muslim Brothers*, New York: Oxford University Press, 1969
- *Muslims of Europe Charter*, Council of European Muslims (CEM), https://www.eumuslims.org/en/islam-europe, մուտք՝ 22.03.2023
- *"New Muslim Brotherhood Leader: Resistance in Iraq and Palestine is Legitimate; America is Satan, Islam Will Invade America and Europe,"* MEMRI Special Dispatch No. 655, February 4, 2004, մուտք՝ 20.02.2023
- Nielsen, J., *Muslims in Western Europe*. Edinburgh University Press, 2016 (First edition in 1992)
- Poston, L., *Islamic Da'wah in the West*. New York: Oxford University Press, 1992
- Rich, D., *The Very Model of a British Muslim Brotherhood*. The Muslim Brotherhood: The Organization and Policies of a Global Islamist Movement, Rubin B. (ed.). New York, 2010, 117-136
- Vidino, L., *Aims and Methods of Europe's Muslim Brotherhood*. Current Trends in Islamist Ideology, Hudson Institute, 2006, https://www.hudson.org/national-security-defense/aims-and-methods-of-europe-s-muslim-brotherhood, մուտք՝ 01.11.2023
- Wickham, C. R., *'What Would Hasan Al-Banna Do?: Modern (Re) Interpretations of the Brotherhood's Founding Discourse'*. The Muslim Brotherhood in Europe, Bakker E. (ed.), Meijer R. (ed.). 2013, 240-248, https://doi.org/10.1093/acprof:oso/9780199327638.001.0001
- Chittick, W.C., *"Taṣawwuf"*. The Encyclopaedia of Islam, vol. 10 (Leiden: Brill, 2000), 313-324
- Al-Qaradawi, Yusuf, MAYA Conference, 1995, Toledo, Ohio. Transcript available at:

https://www.investigativeproject.org/profile/167/yusuf-al-qaradawi, մուտք՝ 20.02.2023

- Քոչարյան, Հ. Մ., *Ումմայի կարգավիճակն ու բնորոշումը Ղուրանում և վաղ իսլամական սկզբնաղբյուրներում*. Երևան, 2005
- *Հայաստանը և տարածաշրջանը*. ԵՀՀ, 2021

ADAPTATION MECHANISMS OF MUSLIM BROTHERHOOD'S IDEOLOGY IN EUROPE. FIQH AL-AQALLIYYĀT

Heghine Barseghyan
Center for Culture and Civilization Studies

Keywords: *Muslim Brotherhood, ikhwan, Islam, Europe, Muslim minorities, wasaṭiyya, fiqh al-aqalliyyāt, dār al-daʿwa*

The first Muslim Brotherhood groups began settling in Europe during the latter half of the 20th century, coinciding with the first major wave of Muslim migration to the continent. This marked the first instance in the history of Islam where a significant number of Muslims found themselves living in non-Islamic societies. This situation gave rise to various questions encompassing matters such as the permissibility of Muslims residing in Europe and everyday domestic issues. The objective of this article is to explore the mechanisms employed by the Muslim Brotherhood to rationalize the presence of Muslims in Europe and to provide answers to these inquiries, while also examining how their ideology adapts to these new circumstances.